



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻՍԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂԵԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ»
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ԿԱՅՈՒՆ ՉԱՐԳԱՑՄԱՆՆ ՈՒՂՎԱԾ

ԾՐԱԳՐԵՐԻ ՄՐՑՈՒՅԹ

ԿԱՆՈՆԱԿԱՐԳ

Հիմնական դրույթներ

«Օրգանական գյուղատնտեսության զարգացումը Հայաստանի հյուսիսային համայնքներում որպես աղքատության նվազեցման և կենսաբազմազանության պահպանության խթան (OFDNA)» ծրագրի շրջանակներում հայտարարվել է դրամաշնորհային մրցույթ «Լավագույն գյուղատնտեսական ծրագրերի գաղափարների մրցույթ» անվանմամբ: Մրցույթը իրականացվելու Հայաստանի երեք մարզերի (Գեղարքունիք, Լոռի, Տավուշ) 32 ներկայացված գյուղերում:

Դրամաշնորհային մրցույթի նպատակն է նպաստել բնական ռեսուրսների (հողի, ջրի, կենսաբազմազանության) կայուն օգտագործման:

Դրամաշնորհի ընդհանուր գումարը կազմում է 13 000 000 ՀՀ դրամ: Կոոպերացիաներին տրվող դրամաշնորհի չափը կարող է լինել 1 600 000 – 2 700 000 ՀՀ դրամ, իսկ ֆիզիկական անձանց համար մինչև 800 000 ՀՀ դրամ: Կոոպերացիաների կողմից ներկայացվող ծրագրերը կունենան առավելություն:

Դրամաշնորհին դիմելու վերջնաժամկետն է՝ **31 հունվար 2021**, (դիմել մինչև 12:00 (GMT+4)):



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ»
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

Մրցույթի մեջ ընդգրկված են միայն հետևյալ գյուղերը՝

Գեղարքունիք

- Անտառամեջ
- Այգուտ
- Դպրաբակ
- Կալավան-Բարեպատ
- Ձորավանք

Տավուշ

- Ագավնավանք
- Բերքաբեր
- Չինչին
- Դիտավան
- Հովք
- Իծաքար
- Լուսահովիտ
- Նավուր
- Տավուշ

Լոռի

- Աթան
- Բովաձոր
- Ձորագյուղ
- Հագվի
- Հոբարձի
- Քարաբերդ
- Քարինջ
- Կարմիր Աղեկ
- Լեջան
- Լոռի Բերդ
- Լորուտ
- Մարց
- Պրիվոլնոյե
- Շամուտ
- Ծաղկաշատ
- Ծաթեր
- Ուրուտ



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻԱԿՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ԴԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹԱՆ»
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

Մասնակիցներին տրվող պահանջները

- Մրցույթին կարող են մասնակցել ֆիզիկական անձինք (ԱԶ-ները ևս դիտարկվելու են որպես ֆիզիկական անձ) կամ կոոպերացիաները (կոոպերատիվներ, կազմակերպություններ և գյուղական խմբերի այլ ձևաչափերը)։
- Մասնակցության իրավունք ունեն միայն տվյալ ծրագրի շրջանակներում ստեղծվող կամ ծրագրի շրջանակներում վերակազմավորվող կոոպերացիաները։
- Մասնակցության իրավունք ունեն նաև 18 տարին լրացած և ՀՀ քաղաքացիություն ունեցող և վերը ներկայացված գյուղերից որևէ մեկում հաշվառված ֆիզիկական անձինք (ԱԶ-ները ևս դիտարկվելու են որպես ֆիզիկական անձ)։
- Մրցույթին մասնակցելու համար անհրաժեշտ է լրացնել համապատասխան դիմում-հայտը ամբողջությամբ և միայն հայատառ, կցել բոլոր պահանջվող փաստաթղթերը։
- Անհատը կամ կոոպերացիան կարող են ներկայացնել միայն մեկ ծրագիր։
- Ներկայացվող ծրագիրը պետք է իրականանա միայն վերը նշված գյուղերում և ապահովի տվյալ գյուղի զարգացումը, ռեսուրսների կայուն օգտագործումը։
- Դրամաշնորհում հաղթելու դեպքում, մասնակիցը պարտավորվում է ունենալ անձնական ներդրում դրամաշնորհից ստացված գումարի հարյուր տոկոսի չափով (ներկայացվող ծրագրի բյուջեյի 50 տոկոսը տրամադրվում է դրամաշնորհի կողմից, իսկ մասնակցի կողմից պետք է տրամադրվի մյուս 50 տոկոսը կամ ավել)։
- Հաղթող մասնակիցները պարտավորվում են կնքել աշխատանքների իրականացման պայմանագիր։
- Մրցույթին չեն կարող մասնակցել գործող օրենսդրությամբ սահմանափակումներ ունեցողները (լուծարում, սննկացում և այլն)։



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂԵԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԶՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹՎՆ»
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

Գնահատման չափանիշներ

Դրամաշնորհային ծրագրերը գնահատվելու են ըստ հետևյալ չափանիշների՝

- Մոտիվացիա
- Ստացվող արտադրանքը և քանակները
- Առանձնահատկությունը
- Փորձ
- Կարճաժամկետ ազդեցություն
- Երկարաժամկետ ազդեցություն
- Ծրագրի ազդեցությունը համայնքային / գյուղական զարգացմանը
- Բյուջե
- Ռիսկեր
- Ծրագրի ազդեցությունը բնական ռեսուրսների կայուն օգտագործման և պահպանության վրա
- Ծրագրի ազդեցությունը շրջակա միջավայրի և կենսաբազմազանության պահպանության վրա

Դիմում-հայտ

Դիմում-հայտը և բյուջեն պետք է լրացված լինեն ամբողջությամբ, միայն հայատառ, և կցված լինեն բոլոր պահանջվող փաստաթղթերը:

Կիսատ կամ կեղծ ներկայացված հայտերը չեն դիտարկվի մրցույթի շրջանակներում:



BMZ



Federal Ministry
for Economic Cooperation
and Development

«ՕՐԳԱՆԱԿԱՆ ԳՅՈՒՂԱՏՆՏԵՍՈՒԹՅԱՆ ՉԱՐԳԱՑՈՒՄԸ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀՅՈՒՄԻԱՅԻՆ ՀԱՄԱՅՆՔՆԵՐՈՒՄ
ՈՐՊԵՍ ԱՂՔԱՏՈՒԹՅԱՆ ՆՎԱԾՑՄԱՆ ԵՎ
ԿԵՆՍԱԲԱԾՄԱԶԱՆՈՒԹՅԱՆ ՊԱՅՊԱՆՈՒԹՅԱՆ ԽԹՎՆ»
ԾՐԱԳԻՐ (OFDNA)

Եզրափակիչ դրույթներ

Հաղթող մասնակիցներին ընտրելուց անմիջապես հետո, նրանց հետ կկնքվի աշխատանքների իրականացման պայմանագիր: Գումարը կփոխանցվի նրանց հաշվին իրականացվող աշխատանքներին համապատասխան: Ամբողջ ծրագրի իրականացման ընթացքում տեղի են ունենալու ստուգիչ այցեր: Մասնակիցները պարտավոր են լինելու, ամբողջ ծրագրի ընթացքում, ներկայացնել ֆինանսական հաշվետվություններ:

Ժյուրին կարող է փոփոխություններ իրականացնել բյուջեյում՝ փոխել դրամաշնորհից ստացվելիք գումարի չափը, կախված ներկայացված ծրագրից:

Մրցույթի բոլոր հաղթողները կստանան անհրաժեշտ խորհուրդներ տրամադրված միջոցների հետ աշխատելու կանոնների և ընթացակարգերի, ինչպես նաև նախագծի հաշվետվությունների պատրաստման վերաբերյալ:

Եթե ֆինանսավորման համար անհրաժեշտ քանակությամբ գաղափարներ չընտրվեն որակավորված հայտերի բացակայության պատճառով, նախագիծը կհայտարարի մրցույթի երկրորդ փուլը 2022 թվականին:

Հարցերի դեպքում կարող եք զանգահարել (+374) 44 070857 հեռախոսահամարով, կամ կապ հաստատել մեզ հետ bestidea@nabu.am էլ. հասցեով:

Մաղթում ենք հաջողություն